

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ձեռագրի իրավունքով

ԿԱՐԱՊԵՏՑԱՆ ԱԼԲԵՐՏ ԲԵՆՈՅԻ

ԱՌԱՔԵԼ ՄՅՈՒՆԵՑՈՒ ՓԻԼԻՍՈՓԱԿԱՆ ՀԱՅԱՅԵՐԸ

Մասնագիտություն 09.00.03 - փիլիսոփայության
պատմություն

ԱՎՏՈՌԵԾԵՐԱՏ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճան հայցելու համար ներկայացված
դիսերտացիայի

ԵՐԵՎԱՆ - 1991

Աշխատանքը կատարվել է Երևանի պետական համալսարանի

փիլիսոփայության պատմության ամբիոնում

Գիտական ղեկավար.

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր

Հ.Ղ.Միրզոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ.

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր

Ա.Մ.Թևոյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու,

դոցենտ

Է.Շ.Հարությունյան

Առաջատար կազմակերպություն- Հայկական Աշխատանքային

Կարմիր դրոշի շքանշանակիր Խաչատուր

Աբովյանի անվան պետական մանկավարժա-

կան ինստիտուտի փիլիսոփայության ամբիոն

Դիսերտացիայի պաշտպանությունը տեղի կունենա 1991թ. *հոկտեմբերի*

,,---,-ին, ժամը,,¹⁶,-ին Երևանի պետական համալսարանին

առընթեր գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող

Դ 055. 01.03 մասնագիտացված խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375049, Երևան-49, Մոսկյան 1:

Դիսերտացիային կարելի է ծանոթանալ Երևանի պետական

համալսարանի գիտական աշխատողների կաբինետում:

Ավտոգրաֆերատն ուղարկված է 1991թ., *հոկտեմբերի*,²⁵,-ին

Մասնագիտացված խորհրդի

գիտական քարտուղար *Շահան* ղոց. Ս.Հ.Հովհաննիսյան

- 9 -

Թեմայի քաղաքականությունը: Երկրի տնտեսական, սոցիալ-քաղաքա-
կան և հոգևոր կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններ-
ը, դեմոկրատական շարժումների, ազգային զարթոնքի և ինքնագիտակ-
ցության ձևավորման արդի ժամանակաշրջանում, տեսնական նշանակու-
թյուն է ստանում ազգի հոգևոր մշակութային և տեսական մտքի նըվա-
ժումներին անդրադարձնելը: Այս իմաստով կարևոր են պատմական և փի-
լիսոփայապատմական ուսումնասիրությունները, որոնք յուրաքանչյուր
փորձ և գիտելիքներ են առկա ներկա սերնդին:

Անցյալի հոգևոր ժառանգության ուսումնասիրությունը հասկանա-
կարելիություն է ստանում մեր հասարակության զարգացման ժամանա-
կակից փուլում, քանի որ սոցիալ-քաղաքական մեծ տեղաշարժերի պատ-
ժառակ, խիստ անկայունացել են բարոյական շատ արժեքներ ու շահա-
նիշեր: Այսօր նորովի են հնչում չարի և բարու, զրկաբեկության և
սիրո, հավատի և զրկելիքի հարցերը, որոնք դեռևս սպասում են ի-
րենց վերաարժեքավորմանը: Այսօր ամենուր խոսում են բարոյական ար-
ժեքների կորստյան, հասարակության բարոյալքման մասին: Մեզ այսօր
առավել քան երբեք, անհրաժեշտ է մարդկային հարաբերություններից
դուրս նետել կեղծ զարգացողության կեղևը և վերափնտառվել բա-
րոյական արժեքներին ու շահանիշերը, որոնք կազմում են մարդկային
հարաբերությունների հիմքը:

Անդրադարձնելով այնպիսի մտածողի տեսական ժառանգությանը, որի
ստեղծագործությունները հիմնականում ունեն բարոյաբանական ուղղվա-
նություն, մենք ելնում ենք այն մեթոդաբանական սկզբունքից, ըստ
որի՝ յուրաքանչյուր անցյալի մտածողի պետք է գնահատել նախ և ա-
ռաջ այն տեսանկյունից, թե ներկայումս որքանով են արժեքավոր և
այժմեական նոր գաղափարներն ու մտքերը, միաժամանակ, շահանելով
այն զարգացողներն ու մտքերը, որոնք ինքնին արժեքավոր են, անկախ
ժամանակից և պատմական պայմաններից, քանզի մարդկային մտքի պատ-
մություն մեջ կարևոր է ,մտքի յուրաքանչյուր նրբնաբանը,, /Հեղեկ/:

Բացի այդ, ժամանակակից փիլիսոփայական գիտելիքի զարգացման
պայմաններից մեկը, փիլիսոփայապատմական հետազոտություններն ու
անցյալի մտածողների տեսական ժառանգության ուսումնասիրությունն
է: Միջնադարյան առանձին մտածողների փիլիսոփայական հայացքների
հետազոտությունը որոշակի պատմական պայմաններում, ոչ միայն օգ-
նում են ամբողջական պատկերացում կազմելու տվյալ ժողովրդի հոգևոր
կյանքի մասին, այլև հարստացնում են փիլիսոփայապատմական գիտակ-
յունն ամբողջապես: Միևնույն ժամանակ, առանց միջնադարյան փիլիսո-

փայտեթյան պատմութեան անհնարին է ամբողջովին ներկայացնել փիլիսոփայութեան պատմութիւնն ընդհանրապէս և ժիշտ գնահատել ներկա փիլիսոփայապատմական գիտութեան նվաճումները:

Ինչպէս համաշխարհային, այնպէս էլ հայ միջնադարյան փիլիսոփայական միտքը, իրենց արժեքավոր ներդրումն ունեն ժամանակակից փիլիսոփայական գիտելիքի զարգացման գործում: Ինչպէս իրավացիորեն նույնպէս ասուի՝ Ա. Արեշտայանը, «Երկու կրակի» համատեքստի և գիտելիքի արանքում գտնվող միջնադարյան փիլիսոփայական մտքի պատմութիւնը մարդկութեան հոգեւոր մշակույթի մի առանձնահատուկ փուլ է, որը նախապատրաստել է նոր ժամանակների գիտութեան, այդ թվում և փիլիսոփայութեան անսխալեղ վերելքը,»: ¹ Սակայն միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի մի շարք ներկայացուցիչներ դեռևս չեն ստացել իրենց պատշաճ գնահատականը և չեն ընդգրկվել փիլիսոփայապատմական առանձին հետազոտութիւններին մեջ: Այդպիսիներէն է 14-րդ դարի վերջի - 15-րդ դարի սկզբի փիլիսոփա, բանաստեղծ, քերական և մանկավարժ, մատենագիր և ծաղկող, հոգևոր և հասարակական գործիչ Առաքել Սյունեցիին, որը Տաթևի փիլիսոփայական դպրոցի վերջին խոշոր ներկայացուցիչներից է: Նրա փիլիսոփայական հայացքների ուսումնասիրութիւնը մեծապէս կօզնի ժիշտ հասկանալու Տաթևի փիլիսոփայական դպրոցի գաղափարների տարածումը նոր շրջանում՝ դպրոցի փակվելուց հետո և կրօնապետի միջնադարյան հայ տեսական մտքի որոշակի հատկանիշ լուսաբանմանը:

Թեմայի գիտական մշակման թույլտվութիւնը: Առաքել Սյունեցիին թողել է հարուստ փիլիսոփայական ժառանգութիւն: Նրա փիլիսոփայական հայացքներին տարբեր առիթներով անդրադարձել են Հ. Գաբրիելյանը, Վ. Զաւրյանը, Գ. Գրիգորյանը, Ս. Արեշտայանը և Հ. Միրզոյանը:

Հայ փիլիսոփայական մտքի պատմութեանը նվիրված իրենց աշխատութիւններում Հ. Գաբրիելյանն ու Վ. Զաւրյանը համոզողաբար ներկայացրել են նաև Առաքել Սյունեցու փիլիսոփայական հայացքները: Նրանց

1 Ս. Արեշտայան, Հայոց փիլիսոփայութեան սղբ յուրաքանչեւութիւնը /25-ամյա արդիւնները և առջիկա խնդիրները/, ԽՍՀՄ փիլիսոփայական ընկերութեան հայկական բաժանմունքի Տարեգիրք, Պրեան, 1982, էջ 180:

կարծիքով Սյունեցին նահանջել է Տաթևի դպրոցի փիլիսոփայական առաջավոր միտումներից: Վ. Զաւրյանը թերագնահատելով Սյունեցու փիլիսոփայական հայացքները, նրան նույնիսկ համարում է խավարամիտ և ռեակցիոն մտածող:

Գ. Գրիգորյանը և Ս. Արեշտայանը հատուկ նպատակ չեն ունեցել վեր հանելու Սյունեցու փիլիսոփայական հայացքները: Նրանց նպատակը այլ է եղել և այնուամենայնիվ թուլացիկ գնահատութիւններ են տվել նաև Առաքել Սյունեցու փիլիսոփայական հայացքներին:

Հ. Միրզոյանը խոսելով Դավիթ Անհաղթի մասին իմաստասիրութեան, երկի միջնադարյան մեկնիչների մասին, անդրադառնում է նաև Առաքել Սյունեցուն, որտեղ հիմնականում շեշտվում է նրա հասարակական-քաղաքական, մշակութային և պատմական ծառայութիւնը: Մասնավորապէս այն միտքն է հայտնվում, որ Սյունեցին մեկնել է Դավթի մասին, ելնելով իր դարաշրջանի խնդիրներից և պահանջներից:

Ընդհանուր առմամբ շատ քիչ գործ է արված Առաքել Սյունեցու փիլիսոփայական ժառանգութեան ուսումնասիրման ուղղությամբ և մինչև այժմ չկա հատուկ մենագրական աշխատութիւն նվիրված Առաքել Սյունեցու փիլիսոփայական հայացքներին:

Հետազոտութեան խնդիրներն ու նպատակը: Դիսերտացիայի նպատակն է Առաքել Սյունեցու փիլիսոփայական, քերականական, գեղարվեստական երկերի, ինչպէս նաև ժողովրդի, քարոզների, ներբողների հանգամանակից քննութեան հիման վրա ներկայացնել Առաքել Սյունեցու փիլիսոփայական հայացքները: Դրա հետ մեկտեղ դիսերտացիայում առաջադրվում և լուծվում են հետևյալ հիմնական խնդիրները:

- ընդհանուր գծերով ներկայացնել ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական, պատմա-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքը, այն գաղափարական և հոգևոր մթնոլորտը, որում գործել է Առաքել Սյունեցին,

- համառոտ ներկայացնել Առաքել Սյունեցու կյանքն ու գործունեութիւնը,

- ցույց տալ, որ Սյունեցին ոչ թե նահանջել է Տաթևի դպրոցի փիլիսոփայական ավանդույթներից, այլ հանդես է գալիս որպէս դրանց պաշտպան և շարունակող, իսկ երբեմն էլ՝ զարգացնող,

- բացահայտել նրա փիլիսոփայական հայացքներում եղած դրականն ու արժեքավորը,

- վեր հանել նրա փիլիսոփայութեան հիմնական գաղափարներն ու միտվածութիւնը, ցույց տալու համար, որ նա չի եղել խավարամիտ ու

ռեակցիոն մտածող,

- որոշել Սյունեցու դերն ու տեղը մի կողմից՝ հայ բազմադարյան փիլիսոփայության անցյալի առաջադիմական ավանդույթների շարունակման ու զարգացման, իսկ մյուս կողմից՝ հետագա դարերի փիլիսոփայական մտքի վրա գործած ազդեցության տեսակետից:

Դիսերտացիոն աշխատանքի գիտական նորությունը: Աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում ամբողջական և համակարգված ներկայացնել Առաքել Սյունեցու փիլիսոփայական հայացքները: Նրա փիլիսոփայական ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս անելու մի շարք հետևություններ, որոնցից հիմնականները հետևյալն են՝

1. Առաքել Սյունեցին չի նահանջել Տաթևի փիլիսոփայական դպրոցի ավանդույթներից: Նրա փիլիսոփայական հայացքները հիմնված են ինչպես նախորդ դարերում ձեռք բերված հայ տեսական մտքի նվաճումների, այնպես էլ իր անմիջական նախորդների՝ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների վրա և նրանց գաղափարների պաշտպանողն ու շարունակողը եղավ 15-րդ դարի արշալույսին:

2. Սյունեցին ոչ թե խավարամիտ կրոնական կամ ռեակցիոն մտածող էր, այլ ազգի մակառակրմով մտահոգված մշակութային մեծ գործիչ, լավատես և հումանիստ մտածող:

3. Նա հակակաթոլիկական շարժման ակտիվ կողմնակից էր և ազգապահպանության հարցը նրա փիլիսոփայական տեսության հիմնական զրույցներից էր:

4. Ի տարբերություն Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու, որոնք համեմատաբար մեծ նվաճումների հասն տեսական փիլիսոփայության ասպարեզում, Առաքել Սյունեցին առավելապես զարգացնում է գործնական փիլիսոփայական հարցեր: Նրա փիլիսոփայությունն ունի բարոյախոսական միտվածություն:

Հետազոտության գործնական նշանակությունը: Սույն աշխատանքի գիտական արդյունքներն ու հետևությունները կարող են օգտագործվել 14-րդ դարի վերջի և 15-րդ դարի նկարի հայ փիլիսոփայական մտքի հետազոտության, ինչպես նաև հայ և միջնադարյան փիլիսոփայության պատմության գծով հատուկ դասընթացներ կազմակերպելիս:

Բնօրինակի և տեղական հիմքը: Դիսերտացիոն աշխատանքը կառուցված է արդիական աշխարհընկալման ու գեղագիտական սկզբունքների կիրառման հիման վրա: Հաշվի են առնված հին և նոր շրջանի հայագիտական, ու փիլիսոփայական մտքի նվաճումները: Օգտագործված են տեսական այն

կարևոր աշխատանքներն ու ուսումնասիրությունները, որոնք օգնում են հնարավորին չափ միշտ ու համակողմանի վերլուծել Առաքել Սյունեցու փիլիսոփայական հայացքները, բացահայտել ժամանակաշրջանի բարդ և հակասական երևույթները: Տեսական առումով մասնավորապես հաշվի են առնված փիլիսոփայապատմական գիտությունից ստացվող խորհրդային և հայ նշանավոր մասնագետների հետազոտությունների արդյունքները, մասնավորապես՝ Վ. Փ. Ամուսի, Ա. Փ. Լոսևի, Վ. Վ. Սոկոլովի, Գ. Գ. Մայորովի, Ս. Ս. Արևշատյանի և ուրիշների աշխատությունները:

Հետազոտության աղբյուրները: Դիսերտացիոն զբնդված է միջնադարյան ձեռագրերի, հնատիպ և նոր հրատարակված սկզբնաղբյուրների, ինչպես նաև հայագիտական գրականության ուսումնասիրման և վերլուծության հիմքի վրա: Նյութերի մի մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Աշխատանքի քննարկումը: Դիսերտացիոն աշխատանքը քննարկվել և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության նրանի պետական համալսարանի փիլիսոփայության պատմության ամբիոնում: Նրա հիմնական դրույթներն արտացոլված են հրապարակված հոդվածներում և այն զեկուցումների թեզիսներում, որոնք կարդացվել են հանրապետական գիտական նստաշրջաններում:

Դիսերտացիայի ծավալը և կառուցվածքը: Դիսերտացիոն աշխատանքը բաղկացած է երեք գլուխներից, որոնք բաժանված են յոթ պարագրաֆների, ինչպես նաև ներածությունից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 173 մեքենագիր էջ:

ԱՇԽԱՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներածությունում մեջ հիմնավորված է դիսերտացիոն հետազոտության թեմայի հրատարակությունը, ցույց է տրվում նրա մշակվածության աստիճանը, որոշված են հետազոտության նպատակը և խնդիրները, բերված են աշխատանքից բխող մի քանի հիմնական հետևություններ:

Առաջին գլխում - , ժամանակաշրջանը, կյանքը և գործունեությունը, , - բաղկացած է երեք պարագրաֆներից, տրվում է ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական և գաղափարական իրավիճակները:

Մասնավորապես դիսերտանտը նշում է, որ Սյունեցու ապրած ժամանակաշրջանում Հայաստանը գտնվում էր ծանր քաղաքական և տնտեսական

վիճակում: Օտար ցեղերի հարվածների ներքո աստիճանաբար թուլանում էին երբեմնի հզոր հայ իշխանական տները: Աշխատավոր ժողովուրդը, հատկապես գյուղացիությունը գտնվում էր կրկնակի շահագործման տակ: Ծանր հարկերին և անասելի պայմաններին չղիմանալով, ժողովուրդը մասսայաբար բռնում էր արտագաղթի մանապարհ: Մեծ չափերի էր հասել հավատափոխությունը:

Անմխիթարական էր վիճակը նաև Կիլիկյան Հայաստանում: Դաշնակցություն մոնղոլների հետ, Կիլիկիայի թագավոր Հեթում առաջինը ցանկանում էր դիմագրավել եգիպտական մամլուքների կողմից սպառնացող վտանգին: Սակայն սկզբնական շրջանի հաջողություններին հետևում են ծանր պարտությունները: Երկրում ստեղծվում է հոգևոր-քաղաքական անկայուն մթնոլորտ, ծայր է առնում միաբարոնների և հակամիաբարոնների շարժումը: Հռոմի եկեղեցու և հայ եկեղեցու կողմնակիցների միջև սկսվում է կրոնա-դավանաբանական երկպառակ պայքար, որը աստիճանաբար Կիլիկիայից տեղափոխվում է Արևելյան Հայաստան:

Հայ ժողովրդի համար 14-րդ դարի վերջը և 15-րդ դարի սկիզբը ամենադժվար և դրամադիկ ժամանակաշրջաններից է: Դեռևս նոր էր ընկել Կիլիկյան հայկական պետությունը, իսկ բուն Հայաստանում, որը զրոնվում էր մոնղոլական լծի տակ, չէին դադարել երկպառակշխական կրոնիվներն ու ավարառությունը, ավազակությունն ու զանազան բնախառն քրեական և քաղաքական պայքարները, երբ մեկը մյուսի հետևից Անդրկովկաս ու Հայաստան են ներխուժում Ռուկ Հորդայի խան Թուրքամիշն ու Լենկ-Թեմուրը: Այս նրվածողների արշավանքների ժամանակ բռնություններ, կոտորածն ու գերեզմարություններ հասնում է առավել մեծ չափերի:

14-րդ դարի վերջին և առավել ևս 15-րդ դարի սկզբին արդեն գոյություն չունեին երբեմնի հզոր հայ իշխանությունները՝ Վաչուսյանները, Ջալալյանները, Դոփյանները, Ջաքարյանները և ուրիշներ: Սակայն հայկական ոչ բոլոր իշխանություններն էին լրիվ իրենց քաղաքական դիրքերը և Հայաստանի ոչ բոլոր նահանգներն էին գտնվում լրիվ կախյալ վիճակում: Հայաստանի նահանգներից Սյունիքը թե մոնղոլական տիրապետության շրջանում, թե Լենկ-Թեմուրի ու թուրքմենական ցեղախմբերի տիրապետության շրջանում ենթարկվելով իհարկե, ասպատակությունների, թալանի ու կոտորածի, այնուամենայնիվ կարողացավ պահպանել իր կիսանկախ գոյությունը: Դա հնարավոր եղավ շնորհիվ Սյունաց Օրբելյան իշխանների վարած քաղաքականության: Այսպես, մոնղոլների տիրապետության շրջանում Օրբելյան իշխաններին հաջողվում է քանակ-ցություններ վարել Մանգու խանի հետ և ծեղ բերել հատուկ արտոնագիր՝ ենչու /արքունական/, որով ապահովվում են Սյունիքի համեմատա-

բար կիսանկախ դրությունը:

Քաղաքական քիչ թե շատ ապահով դրությունը նպաստում է գիտամեջակության կայանքի զարգացմանը:

Այս քաղաքականությունը մասամբ նպաստում է երկրի տնտեսական և մշակութային կայանքի զարգացմանը: Ծարունակում էին զարգանալ գիտություններն ու արհեստները, առևտուրն ու վաճառականությունը, գործում էին վանական դպրոցները, որտեղ ծաղկում էր ձեռագրերի գրչությունն ու թարգմանական գործունեությունը:

Այնուհետև դիսերտացիայում ցույց է տրվում, որ 14-15-րդ դդ. քաղաքական կայանքի զլխավոր իրադարձություններից մեկը Հռոմի եկեղեցու և հայ եկեղեցու կողմնակիցների միջև պայքարի սրումն էր: Հայ առաջադեմ մշակույթի գործիչները պայքարում էին եկեղեցու և դավանանքի անաղարտության ու ինքնուրույնության համար, դրանով իսկ պայքարելով հայ եկեղեցու և ազգի անկախության համար: Սյունեցին լինելով ժամանակի նշանավոր հոգևոր և քաղաքական գործիչներից մեկը, շարունակում է իր ուսուցիչների պայքարը կաթոլիկության դեմ:

Դավանաբանական և քաղաքական պայքարը, տնտեսական ծանր վիճակը, բնական աղբյուրները, երկրում առաջացնում էին նոր գաղափարա-հոգեբանական մթնոլորտ, արմատապես փոփոխվում էին հին արժեքներն ու չափանիշները, քաղաքական և հոգևոր պատկերացումները: Ժամանակաշրջանին բնորոշ էր հոգևոր-քաղաքական արժեքների քայքայումը, սկեպտիկական և նիհիլիստական գաղափարների տարածումը, թերահավատությունը կրոնի, եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ, օտարամոլությունը, «Երկրայական ոգին», /Մ. Արեղյան/, մարդու իդեալների և իրականության միջև հակասության խորացումը, որոնք էլ առաջացնում էին զաղափարների և մտքերի շփոթություն, անորոշություն, հուսահատություն և պաշարի նկատմամբ և այլն: Սյունեցին իր ամբողջ զրական, հոգևոր, գիտական և փիլիսոփայական գործունեությունը ծավալել է զաղափարաքաղաքական և հոգևոր այս մթնոլորտում և նրա ստեղծագործությունները մի հերոսական փորձ էր կանխելու նախանշվող հոգևոր անկումը:

Երկրորդ աստիճանում - «Սյունքը և գործունեությունը», - փորձ է արվում եղած փաստերի հիման վրա ներկայացնել Առաքել Սյունեցու կենսագրությունը, ժշտել ինչ-ինչ մանրամասներ: Մասնավորապես նշվում է, որ Առաքել Սյունեցու մասին շատ քիչ տեղեկություններ են հասել մեզ: Ծնվել է մոտավորապես 1350-1355 թվականին: Ըստացել է իր ժամանակի համար քաղաք կրթություն՝ սովորել է հռչակավոր ճաթեի համալսարանում: Աշակերտել է ժամանակի այսպիսի խոշոր մտածողների, ինչպիսիք են Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին:

Հայտնի է նաև, որ եղել է Գրիգոր Տաթևացու քրոջ որդին և Սյունիքի արքեպիսկոպոսը: Հետազոտողները ենթադրում են, որ ունեցել է ազնու-վական ծագում՝ ազգակից է եղել Սյունաց իշխանական տոհմի՝ Օրբելյան-ների հետ: Ըստ եղած տեղեկությունների, Սյունեցին պետք է, որ մահացած լինի 1422-1425 թթ. շրջանում՝ մոտ 70 տարեկան հասակում:

Սյունեցին ծավալել է գրական, կրթական, հոգևոր և մշակութային լայն գործունեություն: Դասավանդել է Տաթևի համալսարանում:

Առաջել Սյունեցուց մեզ են հասել 120-ից ավելի գործեր՝ կրոնա-կան տաղեր ու մատեր, քարզոներ և ներբողներ, խրատա-քարոյական և վիպական տաղեր, «Ցաղազս քերականութեան», աշխատությունը, երկու չափածո պոեմներ և Դավիթ Անհաղթի, Սահմանք իմաստասիրութեան, երկի մի ծավալուն մեկնություն, որը նրա գլուխգործոց փիլիսոփայական գործն է: Այն իրենից ներկայացնում է իր ժամանակի գիտության և մշակութային յուրօրինակ հանրագիտարան:

Քանի որ Սյունեցու Լուծմունքը առավել վառ ձևով է դրսևորվում հեղինակի աշխարհայացքը, ստեղծագործության գաղափարական ուղղվածու-թյունն ու հիմնական էությունը, նպատակներն ու խնդիրները, առավել ցայտուն են երևում նրա տեսական դրույթները, պարզում նրա կյանքի և գործունեության ինչ-ինչ մանրամասներ, ուստի առաջին գլխից-ընդ առաջընդում - , Առաջել Սյունեցին որպես Դավիթ Անհաղթի, Սահմանք, -ի մեկնիչ - քննության է առնվում Սյունեցու կողմից այդ ծավալուն մեկնողական երկի գրության դրոշմաբանները, նպատակը և խնդիրները:

Դիտարկելով համարում է, որ Սյունեցու կողմից Դավթի ժառանգու-թյանն անդրադառնալն ուներ խորը իմաստ և հեռուն զնացող միտումներ: Նախ՝ Սյունեցին անդրադառնալով Դավթին, ցանկանում էր էլ ավելի զարգացնել և աշխուժացնել տաթևյան փիլիսոփայական ավանդույթները:

Երկրորդ՝ նա դրանով իսկ կամա թե ակամա Դավթի հելլենիստական գաղափարները, աշխարհիկ ոգին հակադրում էր իր ժամանակի սխոլաստիկ մտածողությանը:

Երրորդ՝ նրա համար Դավթի ժառանգությունը և հոգևոր, և տեսական գեղեցիկ էր պայքարելու համար կաթոլիկ միսիոներների դեմ, քանզի ժողովուրդը ծանր պահերին միշտ էլ փորձում է անդրադառնալ իր հոգևոր ա-կունքներին, այնտեղից վերցնել կենսական լիցքեր՝ ապրելու, պայքարելու համար:

Չորրորդ՝ Սյունեցին Դավթի անձի և գործի օրինակով ցանկանում էր ոգևորել հայրենակիցներին, գիտության և մշակութային գործիչներին: Դավթը միշտ էլ հայ ժողովուրդի համար եղել է ազգային պարծանք, հայ-

ընտանիքության խորհրդանշան², հայրենի գիտության և մշակութային նվիր-յալ, առաքինության և սրբության չափանիշ: Իզուր չէ, որ ամբողջ միջնադարում՝ ընդհուպ մինչև 19-րդ դարը և նույնիսկ մեր օրերը, հայ մտավորականները ոգևորվել են Դավթի օրինակով, նրան են անդրա-դարձել գիտության և մշակութային ընդհատված ավանդույթները վերականգ-նելու նպատակով,¹ մեծ, հայրենասիրտ գործեր ձեռնարկելիս:

Հինգերորդ՝ եթե կաթոլիկ միսիոներները գիտակցաբար մոռացության էին մատնում Դավթի գաղափարները, ապա Սյունեցին ընդհանրապես, անդ-րադառնում է Դավթի գլուխգործոց փիլիսոփայական երկին, մասսայակա-նացնում և պրոպագանդում է այն:

Վեցերորդ՝ Սյունեցին ցանկանում էր Դավթի գաղափարները ծառայեց-նել իր ժամանակի հայ եկեղեցուն՝ նրա աստվածաբանական դրույթները հիմնավորելու համար, ինչպես որ Թովմա Աբվինացին Արիստոտելի ուս-մունքն էր հարմարեցրել, կաթոլիկ եկեղեցու դոգմաներին: Եվ եթե միշտ է այն, որ Դավթը հայ իրականության մեջ նույն դերն է կատա-րել, ինչ Արիստոտելը համաշխարհային իրականության մեջ, ապա պարզ է դառնում, որ Սյունեցին կաթոլիկ եկեղեցու տոնձգություններին հա-կահարված տալու համար պետք է անդրադառնալ այնպիսի հիմնարար հեղի-նակության, ինչպիսին Դավթի Անհաղթն էր:

Թեև Սյունեցու Լուծմունքն ունի կրոնա-աստվածաբանական և քաղա-յախոսական ուղղվածություն, սակայն հեղինակն այստեղ քննարկում է ամենաըզմազան և բազմապիսի հարցեր, որոնք վերաբերում են իր ժամա-նակի իմացության ամենատարբեր քննադատներին՝ փիլիսոփայությանը, մաթեմատիկային, երաժշտությանը, մանկավարժությանը, աստղագիտությանը և այլն:

Այնուհետև դիտարկանալ այն միտքն է հայտնում, որ Սյունեցու Լուծմունքը կարող է օգտակար լինել Դավթի Սահմանքի համահավաք ըը-նագիրը մշտելու գործում և այդ միտքը հիմնավորում է մի քանի կոնկ-րետ փաստերով:

Սահմանքի Սյունեցու մեկնությունը աներկբայորեն խոսում է նրա փիլիսոփայական խորը գիտելիքների մասին: Այն բարձրադեմ փիլիսոփա-յական աշխատություն է, որը էապես հարստացնում է մեր պատկերացում-ները միջնադարյան հայ տեսական մտքի զարգացման մասին և արժանի է ամենաբարձր գնահատականի: Այն տաթևյան փիլիսոփայական մտքի վերջին խոշոր նվաճումներից է:

1 Տես Հ. Միրզոյան, 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քն-նական վերլուծություն, Երևան, 1983, էջ 128:

Երկրորդ-գլխում - , Գոյաբանական և իմացաբանական հայացքները, , - որը բաժանված է երկու պարագրաֆների, դիսքրանտը ներկայացնում է Աստծո և աշխարհի, գիտելիքի և հավատի, առանձինի և ընդհանուրի փոխհարաբերության, ինչպես նաև աշխարհի ծանաչողության և իմացության գործընթացի, գիտելիքի և մտածողության հարցերի վերաբերյալ Առաքել Սյունեցու պատկերացումները:

Առաջին պարագրաֆում - , Գոյաբանությունը, , - հեղինակը շարադրում է Սյունեցու գոյաբանական տեսությունը, ցույց տալով, որ նա պաշտպանում է գոյի առաջնությունը մասին Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու գաղափարները, զարգացնելով նոմինալիստական տեսակետ:

Գոյաբանական հարցերում Սյունեցին հիմնականում հետևելով Տաթևացուն, զարգացնում է ուշագրավ գաղափարներ, գոյի առաջնությունը, ոչ գոյից աշխարհի ստեղծման, ոչ գոյի և Աստծու հավերժակից լինելու և, հետևաբար, դուալիզմին և պանթեիզմին մոտ գաղափարներ:

Հավատի և գիտելիքի փոխհարաբերության հարցերը քննելիս Սյունեցին տարբերում է աստվածաբանության և գիտության ինչպես առարկաները, այնպես էլ նպատակները: Նա գտնում է, որ աստվածաբանությունը պետք է հոգա փրկության համար, իսկ գիտելիքը՝ մարդու երկրային կյանքի համար:

Առաքել Սյունեցին փիլիսոփայության հիմնական հարցը լուծում է օբյեկտիվ իդեալիզմի դիրքերից: Ըստ նրա Աստված օբյեկտիվորեն գոյություն ունեցող, ոչնչով չսահմանափակված հոգևոր էակ է, որը լինելով անեղ, անսկիզբ և անվախճան, ամեն ինչի սկիզբն է և պատճառ: Փիլիսոփայության հիմնական հարցին լուծվող կրեացիոնիստական բացատրություն, Սյունեցին միաժամանակ փորձում է ռացիոնալ կերպով հիմնավորել այն:

Ըստ Սյունեցու, աստված ոչ թե ոչնչից, այլ ոչ գոյից է ստեղծել աշխարհը, իսկ ոչ գոյը ոչ այլ ինչ է, քան անորակ նյութ, որը Աստված տեսակավորում է՝ ստեղծելով աշխարհի բազմազանությունը: Անորակ նյութը սկզբնապես գուրկ է որակից և որոշակիությունից, այն հնարավորություն է և Աստծո շնորհիվ է ստանում իրականություն, լինելիություն: Սյունեցին գտնում է, որ ոչ գոյը՝ անորակ մատերիան, հավերժակից է Աստծուն, այն չի ստեղծվում և չի ոչնչանում: Իր այս տեսակետը պաշտպանելու համար Սյունեցին առաջ է քաշում առաջին և երկրորդ արարչագործությունների մասին գաղափարը, որը հարցի ինքնատիպ և յուրօրինակ լուծում էր: Ըստ Սյունեցու, գոյություն ունի երկու տեսակի արարչագործություն: Առաջին արարչագործությունն այն է, երբ ոչ

գոյից առաջանում են էակները, իսկ երկրորդ արարչագործության ժամանակ, , անեղ, էակը , եղելություն, է ստանում: Իսկ ինչո՞ւ են տարբերվում և նմանվում առաջին և երկրորդ արարչագործությունները միմյանցից, այսինքն՝ ինչով են տարբերվում և նմանվում ոչ գոյը և Աստված: Այստեղ Սյունեցին անում է կրոնական աշխարհայացքի համար վրձնազվոր պնդում: Նա գտնում է, որ ոչ գոյը նույնպես , անեղ, էր, ինչպես Աստված, , ոչ գոյն՝ որ ոչ էր եղեալ անեղ կոչի և Աստուած անեղ, ¹, - խոսելով նրանց նմանությունների մասին, գրում է Սյունեցին:

Երկրորդ՝ ինչպես որ անեղ Աստված հանձին Զրիստոսի մարդ եղավ և լինելիություն ստացավ, այնպես էլ , անեղ ոչ գոյն՝ գոյ եղև, յոչ գոյէն՝ կենդանիք և բնաւորք եղեն, ²:

Երրորդ՝ ինչպես որ ոչ գոյը թեպետև կար հավերժորեն, սակայն աներևույթ էր, հնարավոր չէր տեսնել ու ճանաչել, և լինելիություն ստանալով միայն առկա կեցություն ստացավ, այսպես էլ աներևույթ Աստված անտեսանելի էր և , մարդեղությունամբն ի տեսութիւն եկն, ,:

Պետք է ասել, որ Սյունեցին խոսելով այն մասին, որ Աստված և ոչ գոյը հավերժակից են և անեղ, բավական հետևողական է այս հարցում: Այսպես, նա գտնում է, որ ինչպես Աստված անուր չի ընդունում ու չի սահմանվում, քանի որ Աստված , սեռականազույգ, է, անչափ և անընդգրկելի, , նա վեր է, քան ամեն մի անուն, ,: Այսպես էլ ոչ գոյը, ոչ անուն է ընդունում, ոչ էլ սահմանվում է:

Այսպիսով, եթե Աստված ոչնչից չի ստեղծել աշխարհը, այլ ինչ-որ բանից, ովքեր դեպքում՝ ոչ գոյից, ապա բնականաբար պետք է ենթադրել, որ ոչ գոյը միշտ էլ եղել է, հավերժ է, ինչպես և Աստված: Եվ երբ Աստծո ստեղծագործ ուժը միանում է ոչ գոյին, ստեղծվում է բնությունը, իսկ սա բավական մոտ է պանթեիզմին: Այսպիսով, ընդունելով մատերիան Աստծո հետ միասին հավերժ սկզբնապատճառ, Սյունեցին հակվում է դուալիզմի: Միաժամանակ, ընդունելով որ Աստված վերաշակելով մատերիան, տալիս է նրան բնության ձև, դրանով իսկ իր էությունն է հեղում բնության մեջ /Աստծո էությունը է լինելիություն ստանում ոչ գոյը/, հետևապես հակվում է պանթեիզմի: Սակայն այս, ինչպես և շատ այլ հարցերում, միջնադարյան հայ մտածողը այնքան էլ հետևողական չէ:

Արձարծելով աշխարհի սկզբնավորման հարցը, միջնադարյան հայ մտածողը փորձել է բացատրել, թե ի՞նչ հաջորդականությամբ և ինչպե՞ս

1 Առաքել Սյունեցի, Լուծմունք յաղագս Սահմանացն Դաւթի, Մարտի, 1797, էջ 278:

2 Նույն տեղում:

է անորակ նյութից ստեղծվում բնության ամբողջ բազմազանությունը: Այս հարցում նրա հայացքներում որոշակիորեն զգացվում է տարրերի մասին ուսմունքի ազդեցությունը: Ըստ Սյունեցու անորակ նյութը նախ աստված տեսակվորում է չորս որակների՝ ցրտություն, ջերմություն, խոնավություն և չորություն: Այնուհետև չորս որակներից կազմվում են չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը և կրակը: Իսկ չորս տարրերից առաջանում են բնության մեջ գոյություն ունեցող բոլոր մարմինները, անշունչ առարկաները, բույսերն ու կենդանիները:

Այնուհետև դիսերտանտը ներկայացնում է Առաքել Սյունեցու պատկերացումները ստեղծագործության երեք տեսակների մասին, որը հայ փիլիսոփայության մեջ նորություն չէր, և ցույց է տալիս, որ Սյունեցին հանդես է գալիս որպես այդ տեսակետի պաշտպանող ու շարունակող: Քյունեցին հետևելով իր նախորդ հայ մտածողներին գտնում է, որ գոյություն ունի երեք տեսակի ստեղծագործություն՝ աստվածային, բընության և արվեստի: Սակայն աստծո ստեղծագործությունը էականորեն տարբերվում է ինչպես բնության, այնպես էլ արվեստի ստեղծագործություններից: Իսկ որոշք են այդ տարբերությունները:

Առաջին՝ եթե աստված, անորակ նյութին, որը որոշակի իրական գոյություն չունի, վերածեց իրականության, այնուհետև տեսակվորեց ըստ չորս տարրերի, որից էլ ստեղծեց ,ամենայն արարածս,, , ապա բնության և արվեստի ստեղծագործությունները կարիք ունեն որոշակի, իրական նյութի:

Երկրորդ՝ եթե Աստված առանց օգնականի է կատարում ոչ գոյից աշխարհի արարումը, ապա բնությունը և արվեստը առանց օգնականի չեն կազմում ստեղծագործել:

Նրորորդ՝ եթե Աստված ստեղծագործելիս կարիք չունի ժամանակի ժցանգի աստծո ստեղծագործությունը , ,ի միում վայրկենի,, էը/, ապա բնության և արվեստի ստեղծագործությունները կատարվում են ժամանակի ընթացքում և ամեն մի առանձին ստեղծագործական ակտ կատարվում է որոշակի ժամանակահատվածում:

Չորրորդ՝ եթե Աստված կարող է տարբեր տեսակներ ստեղծել, որոնց հետ կարող են իրենց նմանները ծնվել, ապա բնությունը և արվեստը չեն կարող այնպիսի իր ստեղծեն, որն իր տեսակից տարբեր, ուրիշ տեսակ ստեղծի:

Հինգերորդ՝ եթե աստված ինչ կամենում է, այն էլ կարող է ստեղծել, քանզի նա ինքնիշխան է՝ աստվածային կամքը ամենագոր է, ապա բնությունն ու արվեստը ամեն ինչ չէ որ կարող են ստեղծել:

Եվ վերջապես, բնության և արվեստի ստեղծագործությունները միշտ

այլալվում, փոփոխվում և մեռնում են, նրանք անցողիկ են, իսկ Աստծու ստեղծագործությունը հավերժ է և անապական:

Այստեղից էլ Սյունեցին եզրակացնում է, որ արարչի հետ միասին հավերժ մնալուն են նաև նրա կողմից ստեղծված աշխարհը և արարածները: Ժիշտ է բնության մեջ ոչ մի կոնկրետ առարկա, առանձին իր հավերժական չէ: Բնությունը անվերջ լինելիության և քայքայման, առաջացման և ուղնչացման պրոցես է: Բայց եթե առանձին անհատներ ծնվում և մեռնում են, առարկաներն ու իրերը իրենց կոնկրետ դրսևորմամբ առաջանում ուղնչանում են, ապա նյութական աշխարհն իր ամբողջություն մեջ պահպանվում է, այն մշտնջենական է և հավերժակից է արարչին:

Ներկընդ պարագրաֆում - , ,իմացաբանական հայացքները,, , - հեղինակը փորձում է բացատրել միջնադարյան հայ մտածողի կողմից առաջ քաշված աշխարհի մանաչողության հարցերը: Մասնավորապես ցույց է տալիս, որ Սյունեցին իմացաբանական հարցերում զարգացնում է սենսուալիստական և կոնցեպտուալիստական զաղափարներ, հանդես է գալիս որպես հավատի և գիտելիքի քննազատների սահմանազատման կողմնակից, որով և հիմք է ստեղծում գիտելիքի անկաշկանդ ու ազատ զարգացման համար: Այս իմաստով նա շարունակում է Տաթևացու գիծը իմացաբանական հարցերում:

Իմացաբանության մեջ ուշագրավ են հատկապես Սյունեցու մտքերը հոգու և մարմնի կապի, իմացությունը խանգարող խոչընդոտների, զգայությունների երկակի դերի և այլ հարցերի մասին:

Մարդկային մանաչողությունն, ըստ Առաքել Սյունեցու, բանական հոգու արգասիքն է: Բայց բանական հոգին իր մանաչողական գործունեությունն իրականացնում է մարմնի միջոցով և օգնությամբ: Այդ պատճառով Սյունեցին հանգամանորեն բնութում է հոգու և մարմնի կապի հարցը, զրտնելով, որ մարդը հոգու և մարմնի միասնություն է և առանց այդ միասնության չի կարող գոյություն ունենալ կենդանի մարդը: Ընդ որում մարդու մոտ հոգին և մարմինը կապվում են միմյանց շնչի միջոցով:

Հետևելով Դավթին, Սյունեցին գտնում է, որ հոգին ունի տասը իմացական կարողություն՝ , ,գորություն,, , հինգ կենդանական և հինգ քանական, որոնց միջոցով իրականանում է մարդկային մանաչողությունը: Հոգու կենդանական գորություններն են՝ կամքը, ընտրողությունը, հոժարությունը, ցանկությունը և բարկությունը, իսկ քանական գորություններն են՝ հասարակ զգայությունը, երեակայությունը, կարծիքը, տրամախոհությունը և միտքը:

Ըստ Սյունեցու, օբյեկտիվ աշխարհի մանաչողությունը սկսվում է զգայական փորձով և իրականանում է զգայաբանների միջոցով: Մարդն իր բոլոր գիտելիքները ստանում է զգայաբանների միջոցով, հետևելով

Արիստոտելին և Դավիթ Անհաղթին, գրում է Սյունեցին:

Հետաքրքրական են Սյունեցու դատողությունները զգայությունների մեկ, կառուցվածքի, դասավորվածության մասին: Ըստ նրա, զգայարանները, ինչպես և ընդհանրապես ամեն ինչ, ունեն աստծու կողմից նախասահմանված կարգ: Զգայություններից ամենակատարյալը գտնվում է վերելում, իսկ համեմատաբար ոչ կատարյալը՝ ներքևում: Ուշագրավն այն է, որ Սյունեցին փորձում է այս կարգն արդարացնել նաև բնականորեն՝ ըստ նյութի խտության և տեսակի:

Իմացության պրոցեսում մեծ տեղ տալով զգայություններին, Սյունեցին այնուամենայնիվ գտնում է, որ զգայարանները կարող են նաև խոչընդոտել իմացությանը և միշտ շեշտում է մի շատ ուշագրավ միտք: Ինչպես նշվեց, ըստ Սյունեցու, բանական հոգին իր բոլոր գիտելիքները ձեռք է բերում բնական աշխարհից զգայարանների միջոցով: Բայց ըզգայարանները կապված են զգալի մարմնի հետ և ծառայում են ոչ միայն բանական հոգուն, այլև զգալի մարմնին: Եվ ահա զանազան մարմնական պահանջներն ու ցանկությունները զայնակողելով և զբաղեցնելով զգայարաններին՝ չեն թողնում նրանց հաստատապես և կատարելապես իմանալ իրը:

Սյունեցին համախ է խոսում կատարյալ գիտության, մաքուր կամ գուտ գիտակցության մասին, գիտակցություն, որը գերելի է ամեն մի խանգարող և միտքը խոչընդոտող բաներից: Նա զարգացնելով իր մտքերը իմացության մասապարհին ընկած խոչընդոտների մասին, փորձում է բացահայտել մաքուր իմացական ընդունակության թույլ կողմերը, որոնց հաղթահարումով միայն բանական հոգին կարող է հասնել ժշմարիտ գիտելիքի: Բացի մտքի ազդեցությունից, իմացությանը խանգարող, «կուռքերի», աղբյուր է հանդիսանում ինչպես մաքուր զգայական կառուցվածքը, այնպես էլ մարդկային շատ զգալմունքները և հարաբերությունները: Սյունեցին մարդկային իմացության մասապարհին տեսնում է տասը խոչընդոտներ:

Այնուհետև դիսքուսանտը համառոտ համեմատություն է անցկացնում Փրենսիս Բեկոնի կուռքերի տեսության և Սյունեցու կողմից բերվող իմացությանը խանգարող խոչընդոտների միջև, նշելով, որ թեև Սյունեցին հատուկ կուռքերի տեսություն չի ստեղծել և հարցը չի դնում այնպիսի խորությամբ ինչպես Փրենսիս Բեկոնը, սակայն ինքնին ուշագրավ է Սյունեցու կողմից այդ հարցերին անդրադառնալը:

Ըստ միջնադարյան հայ մտածողի, մաքուր գիտելիքը հարաբերական է: Այն ձեռք է բերվում փորձի ու բանականության միջոցով և փոփոխվում է, ինչպես օբյեկտիվ իրականությունը: Սյունեցին ընդունում է գիտելիքի երեք տեսակ՝ մարդկային, հրեշտակային և աստվածային, որոնք գոյություն

ունեն գուզահոսքաղ և չեն խառնվում միմյանց գործերին:

Մարդկային գիտելիքը էականորեն տարբերվում է ինչպես հրեշտակային, այնպես էլ աստվածային գիտելիքներից: Մաքուր գիտելիքի ձեռք բերման համար կարիք ունի զգայական փորձի, նրա գիտելիքը ձեռքբերովի է և կարող է մոռանալ: Ի տարբերություն մարդկային, հրեշտակային գիտելիքը բացարձակաորեն կարիք չունի զգայական ինֆորմացիայի: Նրանք մաքուր հոգիներ են և ունեն կատարյալ գիտելիք, սակայն Աստծու հետ համեմատած՝ նրանց գիտելիքը սահմանափակ է: Աստված ունի բացարձակ գիտելիք, նա ամենագետ է:

Սյունեցին քննում է մարդկային գիտելիքի աղբյուրի հարցը, զրուներով, որ գիտելիքը, որը վերածվում է գիտության, դա օբյեկտիվ աշխարհի բանական մասաշողությունն է, որն իր բովանդակությունը քաղում է իրերից և թույլ է տալիս մեզ օգտվել այդ իրերից: «Գիտություն ուստի առնու գուկիզն իւր», - հարցնում է Սյունեցին և պատասխանում, «այսինքն ի գիտելի իրէն և իմացեալ իրէն՝ առնու գուկիզն իւր...»:

Ըստ միջնադարյան հայ մտածողի գիտությունը կոչված է ծառայելու ոչ միայն մարդու երկրային կարիքներին, բնությունից միշտ և առավելապես օգտվելու նպատակին, այլև օգնելու մարդուն նմանվել կատարյալին՝ Աստծուն: Սյունեցին գտնում է, որ բնության իրերի և երևույթների մասին գիտելիքի ձեռք բերման մասապարհով կարելի է հասնել գիտելիքի Աստծո՝ գերազույն կատարյալ էակի մասին, որը և թույլ կտա նմանվել-ձուլվել նրան:

Այնուհետև դիսքուսանտը ցույց է տալիս, որ ինչպես գոյաբանական, այնպես էլ իմացաբանական հարցերում Առաքել Սյունեցին իրեն հաճախ փիլիսոփայական դպրոցի վերջին խոշոր ներկայացուցիչ շարունակում ու զարգացնում է իր ուսուցիչների ուսմունքի լավագույն միտումները:

Երրորդ գլուխ՝ «Հասարակական-քաղաքական և բարոյագիտական ըմբռնումները», - կազմված է երկու պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում - «Հասարակական-քաղաքական հայացքները», - հեղինակն այն միտքն է հայտնում, որ Սյունեցու հասարակական-քաղաքական հայացքների հիմքում ընկած է նրա ոգեշունչ հայրենասիրությունը: Ապրելով մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը կորցնելով պետականությունն ու քաղաքական ինքնուրույնությունը, հեծում էր օտար բռնակալների լծի տակ, երբ օրավուր ժողովուրդի մեջ ուժեղանում էր հուսալքությունն ու հոգեհեծությունը, քաղաքական ու հոգևոր երկվությունը, Առաքել Սյունեցին գիտակցաբար իր ստեղծագոր-

1 Առաքել Սյունեցի, Լուծմունք յաղագս Սահմանացն Դավթի, Մաղբաս, 1797, էջ 547:

ծուծությունները լիցքավորում էր հայրենասիրական շնչով, ընթերցողներին հիշեցնում էր նախնիների փառավոր անցյալը, գիտություն և մըշակույթի նշանավոր գործիչների օրինակով փորձում էր ոգեպնդել ժամանակի մտավորականությանը: Նպատակը մեկն էր՝ ժողովրդի մեջ վառ պահել ազգային արժանապատվության ու հպարտության ոգին, պահպանել ազգային դիմքն ու ինքնությունը, չընկմել օտար ընտանիքների հարվածների ներքո, գոտեպնդվել, համախմբվել և վերջ տալ օտար ընտանիքությանը, վերականգնել հայոց պետականությունն ու հոգևոր աթոռը:

Սյունեցին, լինելով Սյունաց հոգևոր առաջնորդը և ժամանակի նորշանավոր հասարակական-քաղաքական գործիչներից մեկը, իր ողջ ստեղծագործությունն ու գիտակցական կյանքը նվիրեցելու է ազգապահպանության սուրբ գործին:

Դիսերտանոր փորձում է ցույց տալ, որ եթե Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին այդ նպատակին գնում էին տեսական փիլիսոփայության միջոցով, ապա Սյունեցին արդեն նույն քանին ընթանում էր գործնական փիլիսոփայության, քաղաքագիտության միջոցով:

Սյունեցին քննադատում է ֆեոդալական հասարակարգի շարիքներն ու անօրինակությունները, սոցիալական անհավասարությունն ու անարդարությունները, գողությունն ու ավազակությունը, մարդկանց արտավորված քարքեղը: Նա այս սոցիալական շարիքներով լի աշխարհից առաջնորդում է դեպի դարձ-քաղաքը, որտեղ չկան շահագործում և թալան, այնտեղ իշխում է սոցիալական արդարությունն ու հավասարությունը:

Սյունեցու սոցիալական հայացքներում իշխում է կաթոլիկ, ներդաշնակության մասին քրիստոնեական, նորպատանական գաղափարը: Նա զրուում է, որ հասարակության մեջ ամեն մեկը պետք է իր տեղում լինի, սրբոցն կատարի իր պարտականությունները, հասարակության անդամների միջև ներդաշնակություն պետք է լինի, որպեսզի լինի կառավարչի հասարակություն: Ժողովրդի և ֆեոդալների միջև հասարակական ներդաշնակությունը խախտում են ոչ միայն ժողովրդական շարժումները, այլև իշխողների ազատությունն ու կամայականությունը, որը երկիրը հասցնում է ամենաթշվառ վիճակի: Սյունեցին հիշեցնում է, որ երբ ամեն մեկն իր անմիջական շահը նկատի ունենալով շահագործում և թալանում է իր հրապատակին, դրանով իսկ թուլացնում է երկիրը և փորձում է կրոնի ու քաղաքականության միջոցով վախեցնել մեղք գործողներին: Նա ևս նման նման տեսնում էր քաղաքական իդեալի և իրականության տարբերությունը, հասկանում էր, որ իրականում չկա և չի կարող լինել անհրաժեշտ ներդաշնակություն, եղանակություն և անբիծ քաղաքական վարքի միջև¹:

---Tsgu---B.T.---Асмус, Этика Канта. - В кн: И. Кант, Сочинания, т. 4, ч. I, М., 1965, с. 18.

նկատում էր, որ հաճախ լավագույն բախտ են արժանանում, հարստանում և վայելում են այն մարդիկ, ովքեր անխնա շահագործում են և ամեն քայլափոխին ոտնահարում են կրոնական և քաղաքական նորմերը: Սակայն Սյունեցին գտնում է, որ Աստված ամենատես է և ոչինչ չի վրիպում նրա ուշադրությունից և աշխարհիկներին սպասվում է հատուցում իրենց ամեն մի չնչին մեղքի համար:

Հանձին Սյունեցու մենք տեսնում ենք մի կողմից բարձրաշխարհիկ հոգևորականին իր սոցիալական դիրքորոշումով, որը կոչում է օրինապահության և կարգ ու կանոնի, մյուս կողմից ժողովրդի ճակատագրով անհանգստացած հասարակական գործիչին, որը ձգտում է լուսավորչական քարոզներով ժողովրդին մղել ազնիվ արարքների և հայրենասիրական գործերի: Մեր խորին համոզմամբ, այսօր էլ այժմեական են հնչում Սյունեցու դատողությունները քաղաքականության միջոցով հասարակական հարաբերությունները կարգավորելու միտքը: Նրա հասարակական-քաղաքական հայացքներին բնորոշ է հումանիզմը և լավատեսությունը, ինչպես նաև ուստպիականությունը:

Ներդրող պարագրաֆում - , Բարոյագիտությունը, - դիսերտանոր փորձում է ցույց տալ, որ Սյունեցին նախ և առաջ քաղաքախոս իմաստասեր է: Ի տարբերություն Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու, որոնք զարգացնում էին Դավթի տեսական փիլիսոփայությունը, Սյունեցին զարգացնում էր Գավթի գործնական փիլիսոփայությունը: Նա կրկին շեշտում է գործնական փիլիսոփայության կարևորությունը, պրակտիկ փիլիսոփայությունը, գործնականում փիլիսոփա լինելու հանգամանքը:

Սյունեցու ողջ փիլիսոփայության կենտրոնում մարդու բարոյական կատարելագործման հարցերն են: Նրա զրեթե բոլոր ստեղծագործություններն հենվում քաղաքախոսական միտվածություն: Եթե Տաթևացին գտնում էր, որ նախ հոգու իմացական մասի միջոցով պետք է ձգտել գիտելիքի և Օրշմարտության, ապա նոր միայն հոգու կենդանական մասը կամքի միջոցով մղել բարի արարքների, ապա ըստ Սյունեցու, նախ՝ հարկավոր է մաքրել հոգին ախտերից ու արատներից, քանզի արտավոր հոգին չի կարող հասնել գիտելիքի և Օշմարտության:

Սյունեցին հետևելով Դավթին գտնում է, որ մարդու գերագույն նըպատակը Աստծուն գտնելը և նրան ծուլվել-նմանվելն է: Իսկ մարդն Աստծուն նմանվում է փիլիսոփայության շնորհիվ, հետևաբար փիլիսոփայության նպատակը մարդուն այդ նմանությանը հասցնելն է: Սակայն փիլիսոփայության նպատակը ոչ միայն մարդուն Աստծուն նմանեցնելու մեջ է,

այլև բարոյական կատարելագործման և բարուն հանգեցնելու մեջ:

Սյունեցուն, ինչպես միջնադարյան շատ մտածողների, հուզել է չարի և բարու հավերժական պոլերի մը: Նա զովեբզում է բարիքի զաղափարը և գտնում է, որ մարդու երկրային մեղքերի մեջ է նրա թշվառութունների պատճառը, ուստի հարկավոր է բարիք գործել, մաքրվել մեղքերից, սրբագործել հոգին, որպեսզի արժանանա վերերկրային բարիքներին:

Միջնադարյան հայ բարոյագետը գտնում է, որ Աստված ստեղծել է բնությունը և բոլոր արարածներին բարի, ազատակամ և ստեղծող, քանի որ Աստված իր բնութթով բարի է և բարու նախասկիզբը: Սյունեցին գտնում է, որ բարին որպես անփոփոխ էություն բնորոշ է անեղ բնությանը և անեղ էակներին, իսկ եղական արարածներին բնորոշ է երբեմն բարի, երբեմն չար լինելը, որը կախված է նրանց ազատ կամքից: Այդ պատճառով էլ Սյունեցին մարդկային գործերում չարի պատճառը համարում է մարդու անժնիշխան կամքը: Սակայն մարդու կամքի ազատությունը բացարձակ չի, նա որոշակի սահմաններում կարող է անել կամ չանել, ուզել կամ չուզել: Ան ջանք, որ մարդ չի կարող չանել, մարմինը, բնությունը պահանջում է իրենը: Սյունեցին փորձում է խորանալ պոքր-լեմի պատճառների մեջ և բացատրել, այնուամենայնիվ, չարի առաջացման մեխանիզմը: Այդ ինչպես է, որ մարդուն իր էությունմբ և կամքով Աստված բարի արարեց, իսկ մարդու կամքը երբեմն չար գործերի է մղում նրան: Սյունեցին չարի առաջացման պատճառները ցնում է ելնելով մարդկային հոգու բնական էությունից, նրա կառուցվածքից և մարդու հոգեբանական, բնական առանձնահատկություններից:

Ըստ Սյունեցու, մարդու բնական էությունը առաջնային է և կամքը միշտ հնազանդվում է բնությանը, քանզի մարդը կամքով չի կարող հաղթահարել բնական պահանջմունքները՝ ծարավը, քաղցը, քունը և այլն: Իսկ այն ամենը, ինչ ենթարկվում է կամքին՝ քնական, սուբստանցիոնալ ծագում չունի, այլ «եկամուտ», է և պատահական: Այդպիսին է նաև չարը:

Միջնադարյան հայ բարոյախոսը մեծ նշանակություն էր տալիս մարդկային առաքինություններին և հանգամանորեն քննում է դրանք: Նա կապում է առաքինության և բարու կառեգորիաները և գտնում է, որ առաքինությունները ծնվում են բարուց և գործնական առաքինությունը հենց բարու զարգացումն է: Միաժամանակ Սյունեցին առաքինությունները կապում է փրկիսոփայության հետ և համարում է, որ առաքինությունները հեկայական դեր ունեն մարդկային կյանքում և առաքինության կարելի է հասնել փրկիսոփայության միջոցով:

Սյունեցին միահյուսում է առաքինության, բարու և գիտելիքի պաղափարները, որոնց վերջնական նպատակը գերազույն բարիքի և երանության ձեռքբերումն է: Ըստ Սյունեցու, մարդկային առաքինության չափանիշը աստվածային կատարելությանն ու իմաստությունը հաղորդակցվելու կարողությունն է: Այդ իսկ պատճառով նրա մոտ նույնիսկ մանաչողության գործընթացը ձեռք է բերում բարոյական գործողության, բարոյական արարքի բնույթ: Եվ պատահական չէ, որ Սյունեցին զգայություններին վերագրում է երկակի դեր՝ իմացաբանական և բարոյական, ընդ որում իմացաբանականը կախման մեջ ղնելով բարոյականից: Ընդհանրապես դիսկրտանտը գտնում է, որ Սյունեցուն ավելի շատ հետաքրքրում է պոքր-լեմի բարոյական կողմը, քան թե մետաֆիզիկականը:

Սյունեցին փորձում է միացնել քրիստոնեական բարոյագիտությունը մարդու բնական ձգտումներին: Նրա բարոյագիտությունն ինչ-որ չափով ներառում էր իր մեջ նաև նոր հասարակական-քաղաքական տեղաշարժերը, սոցիալական իրավիմակը և ժամանակի պահանջները: Նա համոզված էր, որ խոր հավատ և կայուն բարոյական չափանիշներ էին պետք ազգին, այդ ծանրը կացությունից դուրս գալու համար:

Բարոյական ասկետիզմը Սյունեցու բարոյագիտական հայացքների հաղկանշական գծերից է: Նա քրիստոնեական ասկետիզմի մի շարք դրույթները հիմնավորում է հենվելով Պլատոնի՝ «բարոյական ասկետիզմի առաջին ուսուցիչի»,¹ հայացքների վրա:

Սյունեցու բարոյագիտության մյուս հատկանշական կողմը այն է, որ նա բարոյագիտական հարցերում մեծ տեղ է տալիս Աստծուն: Իսկ աստվածային հեղինակությունը բարոյական հարցերում պայմանավորում էր բարոյագիտական ըմբոսումների իմպերատիվ բնույթը:

Եզրակացություն մեջ ի մի են բերվում այն հիմնական հետևությունները, որոնք բխում են կատարված հետազոտությունից:

Դիսերտացիայի թեմաներով հրապարակված են հետևյալ աշխատանքները.
1. «Առաքել Սյունեցին որպես Դավիթ Անհաղթի, Սահմանք, -ի մեկնիչ», - Ի. Բախերեր Երևանի համալսարանի, - Եր. 1989, հ. 1, էջ 60-72:

2. «Առաքել Սյունեցու հասարակական-քաղաքական հայացքները», /գեկուցման թեգիսներ/, տես Երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների հանրապետական գիտական 10-րդ նստաշրջան, Զեկուցումների նյութեր, - Եր. 2002 թվ հրատ., 1990, - էջ 19-21:

3. «Առաքել Սյունեցու իմացաբանական հայացքները», - Լեռաքեր հասարակական գիտությունների, - 22 թվ հրատ., Եր. 1991, հ. 4:

¹ Пьер, Левек, Эллинистический мир, М., 1989, с. 115: